



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«31» հունվարի 2014 թ.

N 13-ՆԱ

<<ՀԱՆՍ ՔՐԻՍՏԻԱՆ ԿՈՖՈՒԴ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՆՕԹԵՎԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՕԹԵՎԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՎԵՐԱԿԱՆ ԳՆՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ, ՄԱՔՐԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ, ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԵՎ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՃԱՇԱՑԱՆԿ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով, հիմք ընդունելով << կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի N 614-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետը և << կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն որոշման N 1 հավելվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել՝

- 1) <<Հանս Քրիստիան Կոֆոուդ>> բարեգործական հիմնադրամի անօթևանների ժամանակավոր կացարանում (այսուհետ՝ կացարան) բնակվող անօթևաններին սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով տրամադրվող բնակելի տարածքի, սանիտարական և կոմունալ հարմարությունների անհրաժեշտ պայմանները՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) Կացարանի հաստիքային միավորները՝ համաձայն N 2 հավելվածի.
- 3) Կացարանում օգտագործվող մաքրիչ նյութերի և հիգիենիկ պարագաների անվանացանկը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Կացարանում սպասարկվողներին տրամադրվող սննդամթերքի անվանացանկը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Կացարանի օրինակելի ճաշացանկը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Կացարանի տնօրենին՝

1) Կացարանի հաստիքացուցակը և գնումների պլանը կազմելիս ղեկավարվել սույն հրամանի 1-ին կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերով հաստատված NN 2, 3 և 4 հավելվածներով:

Յուրաքանչյուր տարվա մինչև հունվարի 1-ը նախարարության համաձայնեցմանը ներկայացնել Կացարանի աշխատողների հաստիքացուցակը՝ սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետի՝ N 2 հավելվածով հաստատված՝ աշխատողների հաստիքային միավորների շրջանակում.

2) 2014 թվականի հունվարի 1-ից սկսած Կացարանի սպասարկվողների սննդի կազմակերպման գործընթացում ղեկավարվել սույն հրամանի 1-ին կետի 5-րդ ենթակետով հաստատված N 5 հավելվածով սահմանված օրինակելի ճաշացանկերով:

3. Նախարարի տեղակալ Զ.Բաղդասարյանին՝ մինչև 2014 թվականի մարտի 15-ը ապահովել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը՝ ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու համար:



Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Անհրաժեշտ պայմաններ

**«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի
անօթևանների ժամանակավոր կացարանում (այսուհետ՝ կացարան)
բնակվող անօթևաններին սոցիալ-վերականգնողական ծառայություններ
մատուցելու նպատակով տրամադրվող բնակելի տարածքի, սանիտարական
և կոմունալ հարմարությունների**

1. «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի անօթևանների ժամանակավոր կացարանում (այսուհետ՝ կացարան) բնակվող անօթևանների բնակելի մակերեսով ապահովվածությունը մեկ անձի հաշվարկով չպետք է պակաս լինի 5 քառ.մետրից:
2. Կացարանի յուրաքանչյուր սպասարկվող պետք է ապահովված լինի առանձին մահճակալով, մեկ փոքր պահարանով, իսկ յուրաքանչյուր ննջասենյակ՝ հանդերձապահարանով (յուրաքանչյուր չորս անձի հաշվարկով՝ մեկ հատ):
3. Կացարանը պետք է ունենա խոհանոց, ճաշարան, այն հաշվով, որ սպասարկվողները ճաշարանից օգտվեն ոչ ավել, քան երկու հերթով:
4. Կացարանը պետք է ունենա հանգստի սենյակ կամ սենյակներ, յուրաքանչյուրն առնվազն 30 սպասարկվողի հաշվարկով:
5. Հանգստի սենյակը պետք է ապահովված լինի բազմոցներով, բազկաթոռներով, աթոռներով, առնվազն մեկ հեռուստացույցով և հնարավորության սահմաններում նաև՝ սեղանի խաղերով:
6. Կացարանը պետք է ունենա լվացքատուն, լվացքը չորացնելու համար առանձին տարածք, լվացքի մեքենաներ՝ յուրաքանչյուր հինգ սպասարկվողի հաշվով 1 կգ հզորությամբ:
7. Կացարանը պետք ունենա սանհանգույց, մեկ հատ՝ յուրաքանչյուր տաս խնամվողի հաշվարկով և բաղնիք՝ յուրաքանչյուր 20 խնամվողին մեկ ցնցուղի հաշվարկով:

**Հաստիքային միավորները
 <<Հանս Քրիստիան Կոֆոեդ>> բարեգործական հիմնադրամի անօթևանների
 ժամանակավոր կացարանի
 (100 սպասարկվողի հաշվարկով)**

Հ/հ	Անձնակազմերի և պաշտոնների անվանումները	հաստիքային միավորը
1.	Ղեկավար անձնակազմ	
1.1	Տնօրեն	1
1.2	Իրավախորհրդատու	1
1.3.	Գործավար	1
2.	Ֆինանսա-հաշվային անձնակազմ	
2.1	Գլխավոր հաշվապահ	1
2.2	Հաշվապահ	1
3.	Բժշկական անձնակազմ	
3.1	Բժիշկ՝ թերապևտ	1
3.2	Միջին բուժ. անձնակազմ	
3.2.1	Բուժքույր	2
3.2.2	Դիետ բուժքույր	1
3.3	Կրտսեր բուժ. անձնակազմ	
3.3.1	Սանիտար	2
3.3.2	Բաղնիքի սանիտար	1
3.3.3	Ախտահանող	1

4.	Սոցիալ-հոգեբանական անձնակազմ	
4.1	Սոցիալական աշխատող	2
4.2	Հոգեբան	1
5	Խոհանոցի անձնակազմ	
5.1	Խոհարար	1
5.2	Խոհանոցի աշխատող	1
6.	Տնտեսական և սպասարկող անձնակազմ	
6.1	Տնտեսվար-պահեստապետ	1
6.2	Քույր- տնտեսուհի	1
6.3	Լվացքատան աշխատող	1
6.4	Էլեկտրիկ- փականագործ	1
6.5	Ավտոմեքենայի վարորդ	1
6.6	Օժանդակ բանվոր (շենքի ընդհանուր սպասարկման գծով)	1
6.8	Պահակ (շուրջօրյա հերթապահություն)	4
	Ընդամենը	28

Անվանացանկ
**<<Հանս Քրիստիան Կոֆոեդ>> բարեգործական հիմնադրամի անօթևանների
 ժամանակավոր կացարանում օգտագործվող մաքրիչ նյութերի և հիգենիկ
 պարագաների**

Տարեկան պահանջվող քանակը 1 անձի հաշվով					
N	Մաքրիչ, հիգենիկ նյութերի անվանումները	Չափի միավորը	Քանակը	Պլանային գինը	Ընդամենը (դրամ)
1	Ատամի խոզանակ	հատ	2	120	240
2	Ատամի մածուկ	հատ	6	300	1800
3	Ջուգարանի թուղթ	հատ	24	150	3600
4	Լվացվելու/լոզանքի օճառ	հատ	36	150	5400
5	Տնտեսական օճառ	կգ	0.5	900	450
6	Շամպուն	լիտր	2	700	1400
7	Սպունգ-քիսա լոզանքի	հատ	2	300	600
8	Սպունգ լոզանքի	հատ	3	200	600
9	Սպունգ աման լվանալու	հատ	12	300	3600
10	Սպունգի սպիրալ	հատ	12	150	1800
11	Լվացքի ձեռնոց	զույգ	5	300	1500
12	Աման լվացող հեղուկ	լիտր	2.5	600	1500
13	Ապակի լվացող հեղուկ	լիտր	0.5	500	250
14	Մաքրող փոշի /ոսխշա/	հատ	4	350	1400
15	Ժավել	լիտր	5	200	1000
16	Լողակ	կգ	0.1	2000	200
17	Քլորամին	կգ	1.5	1000	1500
18	Լվացքի փոշի ավտոմատ լվացքի մեքենաների համար	կգ	6	1600	9600
19	Լվացքի փոշի ձեռքով լվացվող մեքենաների համար	կգ	4	1000	4000
20	Անձեռոցիկ	տուփ	12	200	2400
21	Կոշիկի փայլեցնելու մածուկ	հատ	1	300	300
22	Սանր	հատ	1	200	200
23	Հազուստի խոզանակ	հատ	0.5	1000	500
24	Հատակի խոզանակ	հատ	0.1	1000	100
25	Հատակի փայտ	հատ	0.1	1200	120
26	Ավել սենյակի	հատ	2	1000	2000

27	Ավել բակի	հատ	0.5	700	350
28	Զուգարանի և լվացար.խոզանակ	հատ	0.4	700	280
29	Հոտազերծիչ /օդը թարմացնող/	հատ	1	700	700
				Ընդամենը՝	47,390
30	1 տղամարդու հաշվով տարեկան				
31	Սափրվելու մեկանգամյա ածելի	հատ	48	120	5760
32	Սափրվելու մածուկ	հատ	6	450	2700
33	Սափրվելու խոզանակ	հատ	2	250	500
				Ընդամենը՝	8,960
34	անկողնային հիվանդների առկայության դեպքում՝				
35	Տակդիր /փամփերս/	հատ	730	310	226300
36	Անկողնային տակդիր՝ պոլիէթիլենային թաղանթ	հատ	50	100	5000
				Ընդամենը՝	231,300
	Ընդհանուր գումարը՝				287,650

Անվանացանկ
**<<Հանս Քրիստիան Կոֆոեդ>> բարեգործական հիմնադրամի անօթևանների
 ժամանակավոր կացարանում սպասարկվողներին տրամադրվող սննդամթերքի**

Օրական՝ մեկ անձի հաշվարկով

N	Սննդամթերքի անվանումը	Քանակը (գրամ/օր) երեք անգամյա սնունդ	Քանակը՝ օրը երկու անգամ սնվելու դեպքում	Կգ-ի գինը (դրամ)	Գումարը (դրամ)
1	Հացամթերք	530	350.4		
1.1	Հաց	500.0		320	160.0
1.2	Ալյուր	30.0		290	8.7
2	Ընդեղեն	29	29		
2.1	Ոլոռ	9.0		368	3.3
2.2	Սիսեռ	4.0		665	2.6
2.3	Լոբի հատիկ	8.1		770	6.2
2.4	Ոսպ	7.5		518	3.9
3	Ձավարեղեն	57	57		
3.1	Բրինձ	21.0		360	7.6
3.3	Հնդկաձավար	19.2		490	9.4
3.4	Ցորենաձավար	10.0		269	2.7
3.6	Հաճար	6.8		374	2.5
4	Մակարոնեղեն	28	28	389	10.9
5	Բանջարեղեն	556	405.3		
5.01	Կարտոֆիլ	250.0		145	36.3
5.02	Կաղամբ	90.0		135	12.2
5.03	Լոլիկ	30.0		208	6.2
5.04	Վարունգ	16.0		256	4.1
5.05	Վարունգի մարինադ	9.0		850	7.7
5.06	Տոմատի մածուկ	6.5		653	4.2
5.08	Սոխ	30.0		265	8.0
5.10	Գազար	30.0		284	8.5
5.11	Բազուկ	20.0		243	4.9
5.12	Լոբի կանաչ	10.0		376	3.8
5.13	Բադրիջան	30.0		187	5.6
5.14	Պղպեղ	30.0		273	8.2
5.15	Եգիպտացորեն պահածո	4.5		970	4.3
6	Մսամթերք	151	98.8		
6.1	Միս տավարի	100.0		2200	220.0

6.2	Հավի բույ	20.0		933	18.7
6.3	Միս խոզի	12.0		2600	31.2
6.4	Նրբերշիկ	10.0		1500	15.0
6.5	Երշիկ եփած	9.0		1600	14.4
7	Ձկնամթերք	25	19.5		
7.1	Ձուկ	25.0		1153	28.8
8	Կաթնամթերք	298	120		
8.1	Կաթ	100.0		315	31.5
8.2	Մածուն	100.0		350	35.0
8.3	Թթվասեր	18.0		973	17.5
8.4	Կարագ	30.0		2400	72.0
8.5	Կաթնաշոռ	30.0		1500	45.0
8.6	Պանիր	20.0		1843	
9	Ձու (հատ)	0.6	0.33	55	33.2
10	Յուղեր	25	25		
10.1	Ձեթ (բուսական յուղ)	15.0		782	11.7
10.2	Յուղ (կենդանական յուղ)	10.0		1458	14.6
11	Համեմունքներ	11	11		
11.1	Թեյ	1.0		3873	3.9
11.2	Աղ կերակրի	10.0		153	1.5
12	Հյութեր	130	69		
12.1	Հյութ մրգերի	130		450	58.5
13	Մրգեր	175	175		
13.01	Խնձոր	100		370	37.0
13.02	Դեղձ	30		285	8.6
13.03	Բանան	15		855	12.8
13.04	Ձմերուկ	20		118	2.4
13.16	Ջեմ	10		1176	11.8
14	Քաղցրավենիք	76	76		
14.1	Շոկոլադ	20.0		2200	44.0
14.3	Թխվածքաբլիթ	10.0		780	7.8
14.5	Շաքարավազ	40.0		440	17.6
14.7	Մեղր	6.0		2614	15.7
	Ընդամենը՝				1141.7

Երկու անգամ կերակրման դեպքում մեկ սպասարկվողի մեկ օրվա սննդի ծախսը կազմում է մոտ 760 դրամ:

Օրինակելի ճաշացանկ
 <<Հանս Քրիստիան Կոֆոեդ>> բարեգործական հիմնադրամի անօթևանների
 ժամանակավոր կացարանի

(տաս օրվա կտրվածքով, օրը երկու անգամ կերակրման դեպքում)

	Նախաճաշ	Ընթրիք
Օր 1-ին	Շիլա բրնձով և կաթով Հաց Կարագ Ջեմ Թեյ	Հնդկաձավարով փլավ Ձուկ տապակած Հաց Պանիր Թխվածքաբլիթ Մածուն Թեյ
օր 2-րդ	Հնդկաձավարով փլավ Հաց կարագ մեղր թեյ	Արիշտայով փլավ Հաց պանիր Թխվածքաբլիթ թեյ
օր 3-րդ	Սպիտակաձավարի շիլա Հաց Կարագ ջեմ Շոկոլադ Թեյ	Հնդկաձավարով փլավ Բանջարողենի թթու Հաց պանիր թխվածքաբլիթ թեյ
օր 4-րդ	Ձվածեղ Հաց Կարագ Կաթնաշոռ Թեյ Կարամել	Բլդուրով փլավ Շարոտ Հաց Պանիր Թխվածքաբլիթ Թեյ
օր 5-րդ	Բրնձով փլավ Հաց Կարագ Թթվասեր կաթնաշոռ թեյ շոկոլադ	Կարտոֆիլի խյուս Ձուկ տապակած Թխվածքաբլիթ հաց Պանիր Թեյ
օր 6-րդ	Հնդկաձավարով փլավ	Վերմիշելով փլավ

	Նրբերշիկ Հաց Կարագ խտացրած կաթ թեյ	Պանիր Թխվածքաբլիթ Հաց Թեյ
օր 7-րդ	Շիլա բրնձով՝ կաթով Հաց Կարագ ջեմ Թեյ կարամել	Կանաչ ոլոռի խյուս Հաց Պանիր Շոկոլադ Մեղր Թեյ
օր 8-րդ	Մակարոնով փլավ Թթվասեր, կաթնաշոռ Հաց Կարագ մեղր թեյ	Բլլուրով փլավ Ձուկ տապակած Հաց Պանիր Թխվածքաբլիթ Թեյ
օր 9-րդ	Ձու /խաշած/ Հաց Կարագ Թթվասեր, կաթնաշոռ Թեյ ջեմ	Ոսպով և բրնձով փլավ Հաց Պանիր Կոնֆետ կարամել թեյ
օր 10-րդ	Բրնձով և գազարով փլավ Հաց Կարագ ջեմ Թեյ Շոկոլադ	Վերմիշելով փլավ, նրբերիկ հաց պանիր Մածուն